ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«24» «օգոստոս» 2026 թվական № 531-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2026 թվականի օգոստոսի 21-ի N 42/45.45/28869 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանով հաստատված 374-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության վարչատնտեսական սպասարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.2-Ղ4-5) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:»:

2) Հրամանով հաստատված 377-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության վարչատնտեսական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-18) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի ավագ մասնագետը:»:

3) Հրամանով հաստատված 378-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության վարչատնտեսական սպասարկման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ4-9) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:»:

4) Հրամանով հաստատված 380-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.2-Ղ4-4) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:»:

5) Հրամանով հաստատված 381-րդ, 382-րդ, 444-րդ և 454-րդ հավելվածներում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետների (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-14), (15-33.2-Մ2-15), (15-33.2-Մ2-19) և (15-33.2-Մ2-21) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի **«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետներից մեկը:»:

6) Ուժը կորցրած ճանաչել հրամանի 1-ին կետի 373-րդ, 376-րդ և 383-րդ ենթակետերը և հրամանի 373-րդ, 376-րդ և 383-րդ հավելվածները:

8/24/2026

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան